ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԽՕԼԵՐ

Վօդըւիլ մէկ արարուածով

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Բարեփոխուած

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Ջմօքա»
1907

891.99
Թ-88

19 NOV 2011

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ց91.99
Թ-88

ԽՕԼԵՐ

Վօդեւիլ մէկ արարուածով

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «Ջմօրա»
1907

14/XII 1907
ԲԺՆ ... Публичная Библиотека
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ... ԳՐԱԴԱՐԱՆ 19 I 27 VII
Гос Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясн

19 APR 2013

31958

Ներկայացման իրաւունքը վերապահւած է հեղինակին։

3և578-62

<u>Առաջին անգամ</u>

1893 թ. մարտի 30-ին, կիրակի

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆԻԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

ԽՕԼԵՐ

Կօղըլիլ մէկ արարւածով
Հեղ. Յարութիւն Թումանեանի

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Ղազար Ղահրամանեան, երիտասարդ	պ. Յարութիւնեան
Նազլու, սրա մայրը. . .	տ. Փառանձէմ
Ստեփան, սրանց ծառան .	պ. Գ. Տէր-Դաւթեան
Բժիշկ	պ. Պ. Սարգսեան

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՂԱԶԱՐ ՂԱՀՐԱՄԱՆԵԱՆ, հարուստ երիտասարդ,
ՆԱԶԼՈՒ, սրա պառաւ մայրը,
ՍՏԵՓԱՆ, ծառան,
ԲԺԻՇԿ։

Եւրոպական ձեւով սարքած սենեակ։ Սեղանի վրա դրած են ամիրփանները եւ դեղերի սրուակներ. երկու հատ սրսկիչ (пульверизаторъ) եւ մարմնի ջերմաչափ. պատի վրա կախած է մի ջերմաչափ. անկիւնում մի վաննա, իսկ հանդիսականների դիմաց մի պահարան։

Երեւոյթ I

ՂԱԶԱՐ (*լրագիրը ձեռքին*)

Ա՜խ, Աստուած, Բագւում էս ինչքան մարդ է կոտորւում. (*կարդալով*) «Դաղստանի նահանգապետը հաղորդում է, որ Ջուրայում խօլերով հիւանդացել են 340, առողջացել են 94, մեռել են 246, շրջանում մնացել են 1863»։ Էլ ո՞վ մնաց սաղ... (*կարդալով*) «Սաուրապօլի նահանգապետը հաղորդում է, որ նահանգում հիւանդացել են 860, մեռել են 631, մնում է 129»... (*շպրտելով լրագիրը*) Բաւակա՞ն է. քանի կարդում եմ, էնքան զարհուրում եմ... *խօլեր* խօսքը լսելուն պէս՝ իսկոյն մարմինս սրսռում է... Է՜յ, Ստեփան։ (*Մտնում է Ստեփանը*)։

Երեւոյթ II

ՂԱԶԱՐ ԵՒ ՍՏԵՓԱՆ

ՍՏԵՓԱՆ

Համմէ, աղա։

ՂԱԶԱՐ

Դռները պինդ կողպիր ու ոչ ոքի չը թողնես դայ էստեղ. ոչ ոքի, հասկանում ես, ոչ ոքի... Թէ չէ անիծուածները միկրոբներ կը բերեն...

ՍՏԵՓԱՆ

Աղա, ասում ես—ինչ կը բերեն։

ՂԱԶԱՐ

Խլացել ես, ինչ է—միկրոբներ. հասկանում ես, միկրոբներ...

ՍՏԵՓԱՆ

Աղա, գլուխս մեռնի՜, թէ մի բան լինեմ հասկանում...

ՂԱԶԱՐ

Տո, յիմար, միկրոբ, բացի՜լ...

ՍՏԵՓԱՆ

Աղա, լեզու�էւ էր, թէ փռանցուզէւ էր...

ՂԱԶԱՐ

Էդ քո բանը չէ. քեզ ասում են դռները փակիր և ոչ ոքի չը թողնես, ուրիշ ոչինչ... Դե դնա, ինչ ես ռեխդ բաց արել ու երեսիս նայում...

ՍՏԵՓԱՆ (առանձին)

Քանի դնում է, դժուում է աղէս... (գնում է)։

Երևոյթ III

ՂԱԶԱՐ (մենակ)

Մի քիչ կարբոլկա շաղ տամ, թէ չէ վատ

տաբի է... (Բաց է անում մի սրսակ եւ սկսում է սրսկել կարբոլեան թթու) Էս ինչ յիմար պուլ-ուերիզատոր է. կարծես, երեխայի խաղալիկ լինի... Է՜յ, Ստեփան։

Երևոյթ IV

ՂԱԶԱՐ ԵՒ ՍՏԵՓԱՆ

ՍՏԵՓԱՆ

Համմէ, աղա... (առանձին) էլի կամ աղն է պակաս, կամ մաղը։

ՂԱԶԱՐ

Դռները փակեցի՞ր։

ՍՏԵՓԱՆ

Հրամմել ես, փակեցի։

ՂԱԶԱՐ

Էս պուլուերիզատորը շատ պստիկ է. դրա շինողի չաքուչը կոտրի՜, իսկի բանի պէտք չէ։

ՍՏԵՓԱՆ

Ինչը՞, աղա։

ՂԱԶԱՐ (ցոյց տալով սրսկիչը)

Զահռումարը, ինչը—էս, էս, էս եմ ասում, այ...

ՍՏԵՓԱՆ

Հա՜, էդ գիտեմ... զուռնան...

ՂԱԶԱՐ

Ղալալօվի դուքանի մօտ մի ժեշտի ուստա կայ, ճանաչո՞ւմ ես։

ՍՏԵՓԱՆ

Հրամմել ես, ճանաչում եմ. էն, որ մի փանար առար բաղչի համար։

ՂԱԶԱՐ

Հա՛, հէնց էդ է, ինքն էլ մի բարակ-բարակ, լղար-լղար տղայ է։

ՍՏԵՓԱՆ

Հրամմել ես, ճանաչում եմ... Ինքն էլ, որ էսէնց սխտոր է թակում... (ման է գալիս կաղալով)։

ՂԱԶԱՐ

Հա՛, մի շուտ վազի՛ր նրա մօտ ու մի հատ մեծ պուլւերիզատոր եմ ղակազ տւել, առ բե՛ր։ (Տալով սոսկիշը) Ա՛յ, սրանից եմ ղակազ տւել. էս էլ հետդ տար ու ցոյց տուր։ Ասել եմ էնպէս շինի, որ ամեն մի կողքը մի արշին լինի, որ կարբօլկան շատրւանի պէս շպրտի... հասկանո՞ւմ ես...

ՍՏԵՓԱՆ

Հասկանում եմ, ոնց չէ... որ շատրւանի պէս շպրտի...

ՂԱԶԱՐ

Դէ գնա՛ բայց կը չափես, անպատճառ մի արշին լինի։

ՍՏԵՓԱՆ

Բա՛շուստա, աղա՛, կը չափեմ (դուրս է գնում)։

Երեւոյթ V

ՂԱԶԱՐ (մենակ)

Էս անիծւած ճանճերը շատ վտանգաւոր են. (մի ամփոփակի տակից հանում է ծխախոտ եւ սկսում է ծխել) կարող են միկրօբներ բերել իրանց թեւերի ու ոտների վրա.. (թաշկինակով սկսում է քշել ճանճերին) քշ՛շ . քշ՛շ... տես, խակի վախենո՞ւմ են. .քշ՛շ... դէպի լուսամուտ, ա՛յ անպիտաննե՛ր... քշ՛շ . Տօ. ձեզ հետ չեմ... քշ՛շ... (յանկարծ մի ցնցում զործելով՝ զարհուրած յետ է թռչում) օ՛յ, ճ՛յ... մէկը նստեց քթի՛ս... Հիմա, ո՞վ գիտէ, թէ ինչ կըլինեմ. (դիտելով իրան հայելու մէջ) տեսնեմ, քիթս խօ չը կծկւեց... Չէ, փառք Աստուծոյ, դեռ ոչինչ չը կայ. քիթս սալամաթ է։ Մի քիչ Բօտկինի կաթլի խմեմ, թէ չէ վատ տարի է, հարկաւոր է ստամոքսը միշտ կապած պահել.. (ածում է մի սրւակից կաթիլներ եւ խմում)։ Ամեն տեսակ զգուշութիւն ես գործ դնեմ ու ճանճերի ձեռքին գերի մնա՞մ, ախր Աստւած վե՛ր կ'առնի... Ը՛հ, էս րոպէիս սրանց օխտերը կը գամ... (բարկացած խփելով գլխարկը պատերին, առաստաղին, յատակին) Քշ՛շ...

քշ՛շ, աւանակնե՛ր. քշ՛շ, խոզի ճուտե՛ր. քշ՛շ, մլթօնի զաւակնե՛ր. քշ՛շ, լպստածնե՛ր, նզովեալներ, անամօթնե՛ր... Տօ, դուք նամուս չունէ՞ք, ուզո՞ւմ էք ինձ սաղ-սաղ սպանել. ախր ես մեղք չե՛մ... Ասում եմ, քշ՛շ... (յանկարծ սայթաքում է) եւ՝ գլուխը դիպցնելով դռան, վայր է ընկնում) Է՜յ, օգնեցէ՛ք, Ստեփա՛ն... Ստեփա՛ն...

(Մտնում է Նազլուն սարսափած)

Երեւոյթ VI

ՂԱԶԱՐ ԵՒ ՆԱԶԼՈՒ

ՆԱԶԼՈՒ

Ի՞նչ է, ի՞նչ է... Ղազար ջա՛ն.. ի՞նչ է պատահել...

ՂԱԶԱՐ (վեր կենալով)

Ո՜ւֆ, ճակա՛տս... անիծուած ճանճերին քշում էի, յանկարծ ոտս սլքւեց.. ո՜ւֆ ճակատս...

ՆԱԶԼՈՒ

Բան չը կայ, որդի՛, բան չը կայ։

ՂԱԶԱՐ (դիտելով հայելու մէջ)

Մայրի՛կ, վախենում եմ, որ խօլեր ընկնե՛մ...

ՆԱԶԼՈՒ (խաչակնքելով առանձին)

Է՜յ, սուրբ Աստուածածի՛ն, Դու ողորմեա. (բարձր) որդի՛, մատաղ կորի՜, մատա՛ղ.. աղօթք արա՛, Ղազար ջա՛ն։

ՂԱԶԱՐ

Ջահլէս պիտի տանես քո մատաղով. քանի՞ ասես, բաւակա՛ն չէ։

ՆԱԶԼՈՒ

Այ տղա՛յ, գժուե՛լ ես. ուզում ես, որ Աստուած մեզ վրա բարկանա՛յ։

ՂԱԶԱՐ

Աստուած էն ժամանակ կը բարկանա՛յ, երբ ես ձեռքերս ծալեմ ու առանց նախազգուշութիւնների նստեմ... Նա մեզ տուել է խելք ու բանականութիւն, որ մենք ինքներս պաշտպանուենք։

ՆԱԶԼՈՒ

Էդպէս բաներ մի՛ ասա, որդի՛, մահացու մեղք է... Մարդուս ճակատին ինչ գրուած է, էն էլ պիտի կատարուի. դու հազար ասա։ Որդի՛, խելքդ գլուխդ հաւաքի՛ր. մատաղ կորի՜, աղօթք արա՛, թէ չէ՝ դու էլ ես մեղք, ես էլ։

ՂԱԶԱՐ

Դէ, գլխիս գայլի աւետարան մի կարդար... Հէնց ամեն տեղ պառաւները էդպէս են ասում, որ խօլերը քանի գնում, էնքան տարածւում է։ Գնա՛, գնա՛, գործիդ ու խրատները քեզ համար պահի՛ր։

ՆԱԶԼՈՒ

Դու ես գիտում, Ղազա՛ր, յետոյ ինքդ կը փոշմանես։ (Դուրս է գնում)։

Երևոյթ VII

ՂԱԶԱՐ (մենակ)

Ասում եմ, մի քիչ էլ կարբոլկա փչեմ, թէ չէ վատ տարի է... (սկսում է սրսկել)։ Սա էլ դառաւ պուլւերիզատոր էլի՜... Կարծես տիկիններին դուխի փչելու լինի՜... Ա՛յ, սրա չինողի վիզը կատու ծամի...

(Մտնում է Ստեփանը մի մեծ սրսկիչ ձեռքին)։

Երևոյթ VIII

ՂԱԶԱՐ ԵՒ ՍՏԵՓԱՆ

ՍՏԵՓԱՆ

Աղա՛, բերեցի. ամա մէկ կողքը մի արշինից պակաս է, չափեցի...

ՂԱԶԱՐ

Հեռո՛ւ, հեռո՛ւ... մի մօտենար. թող կարբոլկա փչեմ, յետոյ, թէ չէ միկրօբներ կը լինես բերած (մօտենում է Ստեփանին կարբոլկա սրսկելով)։

ՍՏԵՓԱՆ (յետ-յետ փախչելով)

Աղա՛, Աստուած վկայ է, որ ոչինչ չեմ բերել էս զուռնից սաւահի։

ՂԱԶԱՐ (սրսկելով)

Կանգնի՛ր, յիմա՛ր. դու միկրօբին չես տեսնի՜լ...

ՍՏԵՓԱՆ (յետ-յետ փախչելով)

Աղա՛, խի՞ չեմ տեսնի, քոռ խօ չեմ, փառք Աստուծու... (ծածկելով քիթը) փո՛ւֆ, փո՛ւֆ էս ի՞նչ չնահոտ է գալիս, փո՛ւֆ...

ՂԱԶԱՐ (սրսկելով)

Ի՞նչ ես դէս ու դէն փախչում, յիմա՛ր. կանգնի՛ր... Էդ պուլւերիզատորն էլ բարձր պահի՛ր, որ դրա վրա էլ փչեմ։

ՍՏԵՓԱՆ (առանձին եւ բարձրացնելով սրսկիչը)

Ովվէ՜, զահլա տարա՛ւ... (բարձր) ըհա՛... աղա՛, քեզ մատաղ, բօլա՛. ախր ի՞նչ կայ, որ է՜... ախր էդքան խի՞ ես վախում։

ՂԱԶԱՐ (սրսկելով)

Էդ քո խելքի բան չէ, կանգնի՛ր, բարձր պահի՛ր... էդպէս. ոտքերդ էլ բարձր պահի՛ր, որ նրանց տակ էլ փչեմ։

ՍՏԵՓԱՆ (բարձրացնելով ոտը)

Աղա՛, ուզում ես, երկու ոտս էլ դնեմ ուսերիս... (բարձրացնում է միւս ոտը)։

ՂԱԶԱՐ (սրսկելով)

Հանաքի ժամանակ չէ, ոտներդ բարձր պահի՛ր...

ՍՏԵՓԱՆ

Աղա՛, վալլա՜հ, բօլա, բիլլա՜, բօլա...

ՂԱԶԱՐ (կարբոլ. թթու ածելով)

Դէ հիմա, Ստեփա՛ն, էդ թազա պուլւերիզատորով դու էլ ինձ վրա փչի՛ր, թէ չէ վատ տարի է...

ՍՏԵՓԱՆ (առանձին)

Աստուած գիտենայ, դրուստ աչքումը պիտի

փչեմ... (ընդհատ) Աղա, թաղա զուռնան չնորհաւոր լինէ, բարով մաշէս. . (սկսում է սրկել)։

ՂԱԶԱՐ (շուռ գալով այս ու այն կողմ)

Կամաց... կամաց... օհ՜, հա՛, հա՛... չորերս բոլորովին թրջեցիր... բաւական է.. կամա՛ց... բաւական է... տա՛, քեզ չեմ ասում, բաւական է...

ՍՏԵՓԱՆ (թողնելով սրսկիչը)

Աղա, աչքս չը դիպչի, ի՞նչ շպրտում է... թամամ շատրւան է էլի՛. ամա ափսո՛ս, որ մի կողքը արշինից պակաս է։

(Նազլուն հեռից երեւում է)

ՂԱԶԱՐ

Վնաս չունի, շատ լաւն է։

Երեւոյթ IX

ՆՐԱՆՔ ԵՒ ՆԱԶԼՈՒ

ՆԱԶԼՈՒ

Որդի՛, էլի դարդակ բաների հետ ես. մատաղ կարի՛, մատաղ, թէ չէ էդպէս բաներով չես կարող Աստծու ուղարկած պատիժը հեռացնել... Աղօթք արա՛, բալա՛, աղօթք։

ՂԱԶԱՐ (առանձին)

Ը՜հը՜, էլի սկսեց իրա ճիանուրը. (ընդհատ) տա՛, քանի՞ ասես, բաւական չէ։

ՍՏԵՓԱՆ (Նազլուին)

Աղջիկ պարոն, էնքան «մատաղ-մատաղ» ասեցիր, որ սիրտս մատաղի խաշլամա է ուզում... էն Աստուածը, բերանս ջրակալեց։

ՆԱԶԼՈՒ

Դաղար ջան, Աստուած կը բարկանայ, մեռնեմ Նրա զօրութեանը...

ՂԱԶԱՐ (առնելով մեծ սրսկիչը)

Մայրիկ, բեր քեզ վրա էլ փչեմ... կա՛ց, քեզ վրա էլ փչեմ...

ՆԱԶԼՈՒ (փախչելով)

Ես չեմ ուզում, ես չեմ ուզում... (դուրս է գնում)։

Երեւոյթ X

ՍՏԵՓԱՆ ԵՒ ՂԱԶԱՐ

ՂԱԶԱՐ

Ստեփան, էս օթախը մի լաւ մաքրիր. մուղայթ կա՛ց, որ էս շուշէքը, պուղիրօկները չը կոտրես... հասկանում ես, թէ չէ՝ աչքերդ կը հանեմ։ Էս սկամիքն էլ կարդի բեր, բոլոր ճանճերին էլ դուրս քշի, թէ չէ՝ երկիւղալի տարի է։ Էս կալպակնեերին ձեռք չը տաս... Ինչի որ ձեռք տալու լինես, ձեռքերդ կարբօլկով կը լանաս առաջ. էս պուլերիզատորները մուղայթ կաց, որ չը կոտրես։ Շո՛ւտ, ինչ որ ասացի՝ բոլորը կատարիր, ես էլ էս սահաթիս գալիս եմ... շո՛ւտ, էս սահաթիս գալիս եմ... (դուրս է գնում)։

Երևույթ XI

ՍՏԵՓԱՆ (շարած)

Ձեր մեղքին տէր դառնամ, թէ մի բան հասկացայ... Էնքան վրա վրա տուեց, բէյնս իսկի զադ չը մտաւ։ Խոստովանք լինի, էս մեր աղէն ի՞նչ սարսաղ մարդ է եղել։ Խոլերից Էնքան վախում է, որ քիչ է մնում, վկան ծակը հազար թումանով առնի ու մէջը մտնի... Տեսէք, ի՞նչ ծրտի-պրտի, բաներ է դարսել ստոլի վրա։ Աստուած սիրէք, մինը չը լինի, ասի՝ ախր խոլերը ի՞նչ զադ է, որ էդքան դողդողում ես։ Իրա խելքը շատ գլխին է, ինձ էլ խրատներ է տալիս — Մրգեղէն չ՚ուտես, շուտ շուտ շորերդ փոխիր, ձեռքերդ քացախով լուացիր, զուռնան փչիր... Տ՚ օ, զուռնա փչելով խոլեր կը փախչի. բերանիս լազաթը կտրեմ, թէ խոլեր կայ.. Ձեր արևը վկայ, մինչև էսօր ինչոր աղէս խրատներ է տուել, ես դիփ հակառակն եմ արել։ Նա գիշերցերեկ դողդողում է, մուղայթ է կենում, փահրիպ է պահում, էսպէս դեղեր է բանեցնում, իսկ ես՝ ոչ հիմա տեսէք — ինչս է պակասել. տեսէքում վիզն է հաստ, իմը թէ նրանը.. (առնելով մի ամփոփակ) Սրան մտիկ արէք.. բաներ է դարսել. (ձեռքը շարժելով դէպի աջ ու ձախ) փա՜հ, փա՜հ, փա՜հ, փա՜հ... Հը՜, ասես՝ դերուիշի փափախ լինի... (ամփոփակը դնում է գլխին ու թրոչկոտելով սկսում է հայելու առաջ երգել).

«Սարի աղջիկ, մարալ, մարալ,
Տուր ինձ պաչիկ, մարալ, մարալ.
Հէյ դալալա, հէյ դալալա, դալալա,
Սարի աղջիկ, մարալ, մարալ»...

(Երգելու ժամանակ վրա է հասնում Ղազարը)

Երևույթ XII

ՂԱԶԱՐ ԵՒ ՍՏԵՓԱՆ

ՂԱԶԱՐ

Տ՚օ, փո՜ւչ կենդանի, էդ ի՞նչ զալաթներ ես անում։ Քեզ ասել եմ — օթախը կարգի բեր, դու մաղրաբաղութիւններ ես անում...

ՍՏԵՓԱՆ (շշկլատած դնելով ամփոփակն իր տեղը)

Աղա, քեզ մատաղ, էլ չեմ անիլ...

ՂԱԶԱՐ

Կորիր դուրս, անիծուած. էլ աչքումս չ՚երևաս...

ՍՏԵՓԱՆ

Աղա, չիմացայ, կը բաշխես... (դուրս է գնում)։

Երևույթ XIII

ՂԱԶԱՐ (մենակ)

Ձի՜ էլ ամաչում, անզգամ. էստեղ սրտիս դանակ խփես, մի կաթիլ արիւն չի դուրս գալ, իսկ սա ի՞նչ բաներ է անում... Օ՜յ, օ՜յ, գլուխս պտըտում է, ջանս էլ մի քիչ թուլացաւ. վախենում եմ, խոլեր լինի... (դիտելով ձեռքը) տեսնեմ խո կռուչ

365-78-62

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՊԱՇԱՆԻՍԿԻ Ի
Անվան
Գրադարան Բիբլիոթեկա
ՊԵՏ ԱՍՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм-ССР
Ա. Մաշտոցի անվան
Մատենադարան
1 27
ՎԱ
ՊՐՈՊԵՐԱՆԻ

չի գալիս... Չէ, փառք Աստծու, դեռ ոչինչ չը կայ. բայց վախենում եմ, որ յանկարծ սիրտս խառնի։ Վա՜յ, փորս, փորս, ա՜խ, Աստուած, փորս... (Սղմելով փորը). չէ, բանս բուրդ է։ (Դիտելով հայելու մէջ). ճակատս էլ կապտել է, ես ինձ վատ եմ զգում. ինչպէս երևում է, փորս մրսել է... Ստեփան, Ստեփան... (Ստեփանը երևում է դռան մօտ) մի տաք շոր բեր, մի շալ բեր կամ մի բալիշ... շո՜ւտ... (Ստեփանը իսկոյն բերում է մի բարձ)։ Մի կապելու բան էլ բեր, շո՜ւտ... (Ստեփանը գնում է)։ Նշանները վատ են երևում, բանս չլոր է։ Ա՜խ, Աստուած, Դու վերջս բարի անե՜ս։ Ստեփան, ոտդ կոտրի՜, շո՜ւտ...

(Ստեփանը բերում մի թոկ)։

Երևոյթ XIV

ՂԱԶԱՐ ԵՒ ՍՏԵՓԱՆ

ՂԱԶԱՐ (բարձը դնելով փորին)

Ստեփան, շուտով կապիր... վա՜յ, փորս ղրղռում է։

ՍՏԵՓԱՆ (բարձը կապելով թոկով)

Ախր, աղա ջան խլի՞ ես էդպէս անում է՞. ի՞նչ կայ, փառք Աստծու, որ էդպէս վախում ես։ Աղա, ես որքս տեղն ըլեմ, մին երկու ստաքան իրար վրա կը գցեմ ու էն վախան էլ ոչ փորս կը ղրղռայ, ոչ էլ բան կը լինի... Հլա ջեռ, քէֆս էլ կը լաւանայ։ Աղա, պլինդ կապեմ... ը՞հը էսպէս լաւէ։

ՂԱԶԱՐ

Ա՜խ, ճանճեր, Աստուած ձեր դատաստանն անի՜, դիփ դո՜ւք էք մեղաւոր։ Ստեփան, տես խօ կո՞ւչ չեմ գալիս։

ՍՏԵՓԱՆ

Ո՛չ, աղա, հլա ջեռ տաքդել ես։ Վախիլ մի, բան չը կայ, իմ արևը, բան չը կայ։ Աղա, դու ինձ լսի ու մին-երկու ստաքան հուպ տուր։

ՂԱԶԱՐ (զննելով ձեռքերը)

Չէ, կո՜ւչ եմ գալիս, ձեռքերս ուզում են կապտել։ Ստեփան, ես կարելի է մեռնեմ. շուտ վազիր ու բժշկին կանչիր. եթէ զբաղուած լինի, ասա, որ վիզիտին յիսուն մանէթ եմ տալիս, թող շուտով գայ։ Ստեփան, շո՜ւտ... բժի՜շկ... մայրիկ...

(Ստեփան շտապով դուրս է գնում. մտնում է Նազլուն)

Երևոյթ XV

ՂԱԶԱՐ ԵՒ ՆԱԶԼՈՒ

ՆԱԶԼՈՒ (զարհուրած)

Վո՜ւյ, քոռանամ... Ղազար ջան, ի՞նչ է պատահել.. ի՞նչ է, չարդ տանեմ...

ՂԱԶԱՐ

Մայրիկ, մեռնում եմ, խօլեր եմ ընկել... փորս ղրղռում է, ձեռքերս ուզում են կապտել, վա՜յ...

ՆԱԶԼՈՒ (մերսելով)

Որդի, ոչինչ չը կայ, մի վախենար. բալա, Ղազար, ոչինչ չը կայ, փառք Աստծու, երեսիդ ռանգը պարզ է, ինքդ էլ առողջ։ Խոլերը ընկած մարդ շատ եմ տեսել—էդպէս չի լինում, որդի, մի վախենար...

ՂԱԶԱՐ (փոքր ինչ սիրտ առած)

Բաս ոնց է լինում։

ՆԱԶԼՈՒ

Ոնց պիտի լինի. խոլերը ընկածը էն սահաթին կը լուծի, սիրտը կը խառնի, կը թուլանայ, ջանը կը կապտի, կուչ կը դայ...

ՂԱԶԱՐ

Բաս ես չեմ կապտել, կուչ չեմ եկել... մի լաւ մտիկ արա։

ՆԱԶԼՈՒ

Չէ՛, չէ, ամենևին։ Աստուած վկայ է, որ ոչինչ չը կայ։

ՂԱԶԱՐ (դիտելով իրան հայելու մէջ)

Ճշմարիտ... Բաս փորս ինչու էր էնպէս ասում։

ՆԱԶԼՈՒ

Ո՞վ գիտէ, որդի, կարելի է մրսել ես. ամեն մի փորացաւ խո խոլերը չի՞, որ էդքան վախենում ես։

ՂԱԶԱՐ դիտելով իրան)

Չէ՛, փառք Աստծու, դեռ բան չը կայ։

ՆԱԶԼՈՒ

Հալբաթ, որ բան չը կայ։ Որդի, մատաղ կարի, մատա՞ղ։

ՂԱԶԱՐ

Մատաղը բժիշկն է, բժիշկը, հասկանում ես։

ՆԱԶԼՈՒ

Հողեմ բժիշկների գլուխը։ Նրանք չէին, որ էնքան մարդ սաղ-սաղ սպանեցին. մարդ նրանց կը հաւատայ։

ՂԱԶԱՐ

Բաս նրանց չը հաւատամ, քեզ պէսներին հաւատամ։

ՆԱԶԼՈՒ

Բաս էնքան որ ասում են, սուտ է էլի՞։

ՂԱԶԱՐ

Նրանք մարդ փրկող են, ոչ թէ մարդ սպանող։

(Նախասենակում լսւում է բժշկի ձայնը. «ա՛յ տղայ, այս ի՞նչ է թափած գետնի վրա, խո սիրտը չի՞ խառնել»։ Ստեփանի ձայնը. «ոչ, դո՛խտուր ջան, ջուր է թափած, ջուր»)։

Երեւոյթ XVI

ՂԱԶԱՐ, ՆԱԶԼՈՒ ԵՒ ԲԺԻՇԿ

ԲԺԻՇԿ (հեռից)

Բարև ձեզ... ով է հիւանդը։

ՂԱԶԱՐ (մօտենալով)

Աստծու բարին. ես եմ, ես... Պարոն բժիշկ, ինձ թուում է... ը՛, այսինքն, կարծեմ, խօլերը եմ ընկել, բայց մայրս հաւատացնում է, որ ոչինչ չը կայ։

ԲԺԻՇԿ (առանձին)

Ծիծաղաշարժ հիւանդ է... (ըարձր) Պարոն, խնդրեմ, ասացէ՛ք... այդ բարձը... ճշմարիտ, ո՞չինչ չեմ հասկանում...

ՂԱԶԱՐ

Ամօթ չը լինի ասելը, փորս մի տեսակ էր ա՞նում, պարոն բժիշկ. վախեցայ, որ յանկարծ, Աստուած մի արասցէ, մի անբախտութիւն պատահի... և որովհետև լրագրում կարդացի, որ փորը պէտք է շատ տաք պահել, ուստի ես...

ԲԺԻՇԿ

Ի հարկէ, ի հարկէ, պէտք է փորը տաք պահել. բայց բաւական է, եթէ միայն ֆլանելով կապէք... Սակայն բոլորովին խօլերի նշան չեմ նկատում ձեր դէմքի վրա։

ՂԱԶԱՐ (դիտելով իրան հայելու մէջ)

Ճշմարիտ... (մօտենալով բժշկին) իսկ էս ճակատիս կապոյտը։

ԲԺԻՇԿ (զննելով)

Կարելի է, դիպցրել էք մի բանի, կամ վայր էք ընկել. վերջապէս այդ խօլերի նշան չէ։

ՂԱԶԱՐ

Պարոն բժիշկ, ես կասկածում եմ, ես վախենում եմ, որ էս կապոյտը քանի դնայ, էնքան մեծանայ, վերջը սաղ ջանս ծածկի ու տունս քանդի։

ՆԱԶԼՈՒ

Որդի, զուր ինչ ես վախում. մի քիչ առաջ վեր չ՚ընկար ու ճակատդ կապտացիր։

ԲԺԻՇԿ

Ինչպէս է ձեր ախորժակը։

ՂԱԶԱՐ (առանձին)

Հալբաթ մի բան կայ, որ էսպէս հարցնում է... (ըարձր) Փառք Աստծու, ախորժակս լաւ է։

ԲԺԻՇԿ

Խօ չէք լուծել։

ՂԱԶԱՐ

Փա՞ռք Աստծու, դեռ ոչ. բայց քիչ էր մնում, որ լուծէի։

ԲԺԻՇԿ

Իսկ չէք փսխել։

ՂԱԶԱՐ (առանձին)

Զէ, մի բան կայ... (ըարձր) Փառք Աստծու, դեռ ոչ. բայց քիչ էր մնում, որ փսխէի։

ԲԺԻՇԿ

Գիշերներն անհանգիստ խօ չէք լինում։

ՂԱԶԱՐ

Շա՞տ անհանգիստ եմ լինում գիշերները,

շա՜տ. շատ-շատ զարթնում եմ, վեր եմ կենում, փորս դիտում, կարբոլկա եմ փչում, վերմակիս ու բարձիս տակ սկսում եմ ճրագով զննել, որ տեսնեմ սիրտս խո չի՞ խառնել։ Երբեմն հայելու մէջ մտիկ եմ անում, որ տեսնեմ՝ թէ խո կո՞ւչ չեմ եկել, կամ խո չե՞մ կապտել։ Երբեմն էլ կապլի եմ խմում...

ԲԺԻՇԿ

Դուք զուր էք այդպէս անհանգիստ լինում ու կապլի խմում. դուք ինձանից էլ առողջ էք և խոլերի նշոյլ անգամ չը կայ ձեզանում։

ՂԱԶԱՐ

Խնդրեմ, պարոն բժիշկ, եթէ, Աստուած մի արասցէ, մի բան կայ, մի՞ ծածկիլ, ուղիղն ասացէք։ Գուցէ կարծում էք, որ ուղղակի ասելու լինէք, ես յանկարծ կը վախենամ։ Բայց հաւատացնում եմ ձեզ, որ ես վախկոտ մարդ չեմ։

ԲԺԻՇԿ

Երևում է... Բայց ես ձեզ հաւատացնում եմ, որ դուք բոլորովին առողջ էք։

ՂԱԶԱՐ (դիտելով ծեռքը եւ սղմելով փորը)

Ճշմարիտ։

ԲԺԻՇԿ

Զուր էք վախենում, պարոն։

ՂԱԶԱՐ

Պարոն բժիշկ, ի սէր Աստուծոյ, թէ մի բան կայ, ասացէք։ Եթէ կամենաք, մի անգամից հարիւր կաթիլ կապլի կը խմեմ. (ցոյց տալով սրսկները) ահա տեսնում էք—այստեղ կան ամեն տեսակ կապլիներ՝ Բոտկինի, Վալերիանի, Հոֆմանի, Ինոզեմցեւի, Մեատնի։ Եթէ հարկաւոր լինի, կարող եմ վաննա էլ նստել։

ՍՏԵՓԱՆ

Աղա՛, կամենաք, ջուր տաքացնեմ վաննի համար։

ԲԺԻՇԿ

Ես ձեզ խորհուրդ եմ տալիս, որ հեռացնէք այստեղից բոլոր կապլիներն ու վաննան, որովհետև սրանք բոլորն էլ աւելորդ են։

ՍՏԵՓԱՆ (ցոյց տալով մեծ սրսկիչը)

Դժխտուր ջան, իսկ էս զուռնանն։

ՂԱԶԱՐ

Ինչպէս թէ աւելորդ...

ԲԺԻՇԿ

Այո, բոլորովին աւելորդ են. բոլորն էլ դուրս տարէք. սրանք միայն վախեցնող են, ուրիշ ոչինչ։ Իսկ եթէ, Տէրն մի արասցէ, մի բան պատահի, ինձ իսկոյն կանչեցէք ու ես շուտով կը գամ, դեղերն էլ հետս. անհոգ կացէ՛ք ու մոռացէ՛ք խոլերը։

ՂԱԶԱՐ

Պարոն բժիշկ, ես էլ եմ ուզում մոռանալ, բայց որ չի՞ լինում։

ԲԺԻՇԿ

Կը լինի, կը լինի, դուք միայն հեռացրէք սենեակից այս սրսկիչները, վաննան ու դեղերը։

ՂԱԶԱՐ

Տեսնենք, բանը բան ցոյց կը տայ։

ՆԱԶԼՈՒ

Որդի, մատաղ կտրի, մատա՜ղ. .

ԲԺԻՇԿ

Դուք միայն զգուշացէք խակ պտուղներ ու դժուարամարս կերակուրներ գործ ածելուց։

ՂԱԶԱՐ

Օ՜, ես ամբողջ մի ամիս է, որ փահրիզ եմ պահում։

ԲԺԻՇԿ

Մաքրութիւն պահպանեցէք ու շուտ-շուտ լողացէք, սպիտակեղէնները շուտ-շուտ փոխեցէ՛ք։

ՍՏԵՓԱՆ (առանձին)

Երկուսն էլ մէկ խելքի են երևում հա՜

ԲԺԻՇԿ

Աշխատեցէք շուտ-շուտ փոխել բնարականի օդը, զգուշացէք բակը ջրելուց, սենեակների յատակը լանալուց։

ՍՏԵՓԱՆ (առանձին)

Օրհնի՜ քո բերանը, դոխտուր ջան։

ԲԺԻՇԿ

Կաթսաները բանացնելուց առաջ պէտք է եռացող ջրում լանալ, նոյնպէս և ափսէները, բաժակները, դանակները, պատառաքաղներն ու գդալները։

ՍՏԵՓԱՆ (առանձին)

Լեզո՜ւդ պապանձի...

ՂԱԶԱՐ

Լսո՞ւմ ես, Ստեփան։

ՍՏԵՓԱՆ

Հրամել ես, աղա, խո՞ւլ խո չեմ։

ԲԺԻՇԿ

Անձեռնոցիկները, սփռոցներն ու թէյի անօթի սրբիչները պէտք է պահարանում պահել չորացած և այնտեղից հանել միայն գործ ածելու ժամանակ։

ՂԱԶԱՐ

Պարոն բժիշկ, այդ բոլորն անում ենք։

ԲԺԻՇԿ

Առհասարակ աշխատեցէք չը փոխել ձեր կեանքի սովորական եղանակը, եթէ նա կանոնաւոր է եղել։ Սակայն անհրաժեշտ է զգոյշ լինել մրսելուց, խոյս տալ այն բաներից, որոնք կարող են յոգնեցնել ու թուլացնել մարդուն։

Մանաւանդ պէտք է զգուշանաք արբեցողութիւնից։

ՂԱԶԱՐ

Օ՜, մի ամիս է, պարո՛ն բժիշկ, որ իսկի մի կաթիլ գինի կամ արաղ չեմ առել բերանս։

ԲԺԻՇԿ

Գինի կարող էք խմել, միայն կարմիրը, այն էլ այնպիսին, որ խօլերը երեւալուց առաջ է չիչերի մէջ ածւած։ Կարող էք գործ ածել թէյի ու կօֆէի հետ օղի, կոնեակ։

ՍՏԵՓԱՆ

Աղա՛, ես որ ասում էի…

ԲԺԻՇԿ

Օգտակար են քիչ քանակութեամբ ռօմ, շամպանիա։

ՍՏԵՓԱՆ

Դօխտուր ջան, ինձ էլ է օգտակար, չէ՞։

ԲԺԻՇԿ (Ստեփանին)

Այո, բոլորին։ Միայն պէտք է կերակուր պատրաստելու և սեղան ծածկելու ժամանակ ձեռքերդ լւանաս սապոնով ու խոզանակով։

ՍՏԵՓԱՆ

Ամեն օր լւանում եմ քացախով, դօխտուր ջան։

ՂԱԶԱՐ

Այդ բոլորը կատարում ենք, պարո՛ն բժիշկ, իսկ էդ անիծւած ճանճե՜րը…

ԲԺԻՇԿ

Այո, ճանճերն էլ վտանգաւոր են. աշխատեցէք ամեն մի ուտելիք ու խմելիք ծածկւած պահել… առհասարակ զգուշացէք ճանճերից։

ՂԱԶԱՐ

Չի՛ լինում, պարո՛ն բժիշկ, չի՛ լինում. ինչքա՛ն քշում եմ, ինչքա՛ն հալածում եմ, ինչքա՛ն չարանում եմ, բայց էլի չեմ կարողանում նրանց օխտիցը գալ… Հանգիստ նստած ես ու, մէկ էլ տեսնես, տզզալով եկաւ ու քթիդ բազմեց, էն ժամանակ արի՛, էշը ցեխից հանի՛ր։

ԲԺԻՇԿ

Դոկտոր Կօխը իր հետազօտութիւնների ժամանակ մի ճանճի ա՛ջ թևի ու փորի վրա խոշորացոյցով նկատել է երկու հազար միկրօբներ. ուստի խորհուրդ են տալիս զգուշանալ։ Ցտեսութիւն։ Մի բան եղած ժամանակը, ինձ իսկոյն կանչեցէք։ Ցտեսութիւն…

(դուրս է գնում)։

ՂԱԶԱՐ (ապշած ու առանձին)

Դոկտոր Կօխը… Մի՜թէ…

Երևոյթ XVII

ՂԱԶԱՐ, ՆԱԶԼՈՒ ԵՒ ՍՏԵՓԱՆ

ՆԱԶԼՈՒ

Որդի՛, տեսա՞ր, որ ոչինչ չը կայ ու զուր էիր վախենում։

ՂԱԶԱՐ (ապշած)

Դոկտոր Կոֆխը... երկու հատ միկրոբնեբ...

ՍՏԵՓԱՆ

Աղա, վաննան դուրս տանեմ։

ՂԱԶԱՐ (ապշած)

Մի ճանճի աչ թեւի ու փորի վրա... Մբթէ...

ՆԱԶՈՒ

Որդի, իմ խօսքերին չէիր հաւատում, տեսար —էդ էլ քո բժիշկը։

ՂԱԶԱՐ (ապշած)

Դոկտոր Կոֆխը ... խոշորացոյցով... Մբթէ... (սթափելով ու ըարձր) Ստեփան, Ստեփան...

ՍՏԵՓԱՆ

Համմէ, աղա, էստեղ եմ, էստեղ... Տնաւեր, էդքան կը բղաւեն, սիրտս ընկաւ փորս։

ՂԱԶԱՐ

Ստեփան, ես քեզ հրամայում եմ, ես քեզ պատուիրում եմ, որ էս սահաթս բոլոր ճանճերին դուրս քշես էստեղից։ Եթէ մէկ հատ թողնես, իմ արևը վկայ է, էնպէս օյին կը բերեմ գլխիդ, որ շան գլուխ եկած չը լինի, հասկանում ես...

ՍՏԵՓԱՆ

Հասկանում եմ, հասկանում. որ շան գլուխը եկած չը լինի։

ՂԱԶԱՐ

Էնպէս օյին կը բերեմ գլխիդ, որ հօրդ հարսանիքը միտդ գայ։ Մի հա՜տ չը թողնես... մի հա՜տ... հասկանում ես... թէ չէ՝ աչքերդ կը հանեմ։ Սրանից յետոյ էստեղ կը կանգնես ու ճանճերի վրա կը հսկես, որ մի հատ չը համարձակուի մտնել էստեղ։ Քո գործը էդ կը լինի սրանից յետոյ... շու՜տ, բոլորին դուրս քշիր... Մի հա՜տ չը թողնես .. (Բաց անով պահարանի դուռը) Ես էլ մտնում եմ էստեղ մինչև քո դուրս քշելը. մի հա՜տ չը թողնես... (մտնելով պահարանը), մի հա՜տ... հասկանում ես, (կողպելով պահարանի դուռը) մի հա՜տ... մի հա՜տ...

ՆԱԶԼՈՒ (առանձին)

Տէր Աստուած, Դու ողորմե՜ս..

ՍՏԵՓԱՆ (առնելով մի շոր սկսում է ճանճերին քշել)

Է՜ս էր պակաս, ճանճերի ղարաւուլ էլ դառանք... ճանճի թուր էլ չունիմ, որ բոլորին մէկ-մէկ կոտորեմ... քը շշ... քը՜ շշ... քը՜ շշ...

ՎԱՐԱԳՈՅՐ

*) Պահարան մտնելու փոխարէն՝ կարելի է փաթաթուել մեծ շարսաւի մէջ ու մտնել սեղանի տակ։

Ծ. հեղ.

Կովկասի Ուսումնական շրջանի Հոգաբարձի կարգադրութեամբ

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

Ցարութիւն Թումանեանի

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ

ԲԱՌԱՐԱՆԸ

408 եր. մօտ 10,000 բառ

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

Ճանապարհածախսով 90 կոպ.

Դիմել Թէֆիլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская № 25/а.

ԸՆԴՈՒՆԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՅՈՒՇԱՐԱՐ"

Թատերական-գրական-գեղարուեստական երկշաբաթաթերթ

Տարեկան բաժնեգինն է 5 ռ.

Հասցէ՝ Тифлисъ, Редакція «Ушараръ»

ՀՀ Ազգային գրադարան
NL0335799

31958

ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍՆԵԼ

Յարութիւն Թումանեանի

1) ԱՐԻՈՒԹԵԱՆ ԹԵՒԵՐԸ (թարգ.) . .	30 կ.
2) ԱՄՈՒՐԻՆ (սակաւաթիւ) . . .	20 »
3) ՀԱՆԱՔ ՈՒ ԴԱՆԱԿ (սակաւաթիւ) . .	30 »
4) ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ (սակաւաթիւ) .	50 »
5) ՄԵԼԻՔ-ԲԷԳԼԱՐ, պատմ. պոէմ (սակաւաթիւ)	10 »
6) ՄԵԼԻՔ-ԻՍՈՒՓ, պատմ. պոէմ . .	20 »
7) ՆՈՒԱԳՆԵՐ	30 »
8) ՄՈՒՍԱ, պատմ. պոէմ I նուագ . .	20 »
9) ՄՈՒՍԱ » » II նուագ . .	20 »
10) ՀԱԶԱՐԱՆ-ԲԼԲՈՒԼ, ֆէէրիա 3 արարուածով	30 »
11) ԱՐՏԱՒԱԶԴ Բ. պատմ. ֆէէրիա 4 պատկերով	30 »
12) ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ Հայոց աշխարհաբ. լեզ.	40 »
13) ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆ . .	75 »
14) ԽՕԼԵՐ, վոդեւիլ, երկրորդ տպագրութիւն	20 »

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Тифлисъ, Чавчавадзевская ул. домъ Маркарова № 25/а.